

891.995

U-13

ՄԸՆԿԵԿԱՆ ԹԵՏՐՈՆ



Ալեքանդր Աբելեան

**Գ Ա Ր Ր Ե Ջ Ո Ւ Կ**

ՀԻՆ ԴԱՐՆԵՐԻ ԼԵՒԵՆՆԻԱ

Յ Է Ն Ր Ի Ա

1 գործ. 2 պատկերով



(Փոքրերի համար ներկայացնելու):

391.995  
4-13

ԹԻՖԼԻՍ

Տղարան «ՀԵՐՄԷՍ» Գրաֆակայեա փող. 6.

1912





ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԹԱԳԱԻՈՐ

ԹԱԳՈՒՀԻ

ԱՐԱՄԻԿ նոյն Գարրեջուկ, նրանց որդին

ՄԱՆԷ, նրանց պուտորը

ԶՕՐԱԿԱՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

ԿՐՕՆԱԻՈՐ

ԱԻԱԶԱԿ

Պալատականներ, թիկնապահներ, երաժիշտներ, գուսաններ, պարողներ, զօրք, շքախումբ:



ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Տեսարանը ներկայացնում է մի մեծ բլուրի վրայ ընդարձակ հրապարակ:

Ձախ կողմը, անտառի առաջ, շքեղ վրան. դէպի բեմառաջ ծառի բուն: Աջ կողմը կանաչազարդ դաշտ: Մէջտեղ բեմի խորքում նեղ կամուրջ, որ ծղւած է աջից ձախ: Ձախ կողմից հոսող առուն կամրջի տակով գնում է բեմի խորքը: Հեռուն երևում է լեռնաշղթայ և երկինք: Հրապարակի վրայ մէջտեղ դրած է նստարան: Ձախ կողմից լսում է զանգի ձայն:

Տ Ե Ա Ի Լ 1.

ԿՐՕՆԱԻՈՐ, ԱԻԱԶԱԿ ԵՒ ԱՐԱՄԻԿ

ԱՐԱՄ.—(Սեւ երկար զանգուրներով, գիւղացու շորերով, ծառի բունի տակում թազնւելով): Ահ, երբ տեսնում եմ այդ վարդապետին, զըզւանքս է գալիս. չըզիտեմ ինչու, ինձ դուր չեն գալիս նրա աչքերը:

ԿՐՕՆ.—(Եկաւ աջ կողմից վանականի շորով. նրան հետևում է մի ասագակ. խօսում է շշուկով): Էյ, նայիր: Թող խումբը ցրւի անտառում. իմացար:

ԱԻԱԶ.—Իմացայ, խմբապետ:

ԿՐՕՆ.—(Յոյց տալով աջ). Նայիր ներքև: Տեսնո՞ւմ ես, այնտեղ է թագաւորի ամարանոցը: (Ձախ). Իսկ այնտեղ, բլուրի գագաթին վանքն է:

ԱԻԱԶ.—Այստեղերքը ես ճանաչում եմ հինգ մատերիս պէս:

ԿՐՕՆ.—Այդ լաւ է: Երբ թագաւորը գալիս է ինձ մօտ աղօթելու, սովորաբար քիչ նստում է այս նստարանի վրայ հանգստանալու: Հիմա իմացար բանը ինչու՞մն է:

ԱԻԱԶ.—Գիտեմ, խմբապետ: Այսօր գու ուզում ես փախցնես թագաւորի աղջկան, տանես հեռու երկիր և թանգ գնով ծախես:

ԱՐԱՄ.—(Կողմ): Ախ, անգուժ գազաններ... ուրեմն սա աւազակապետ է եղել...

ԿՐՕՆ.—Սա... կարծես ձայն լսեցի: Զգո՛յշ: Այս պահականոցի մէջ պահապան է թագաւորի զօրականներից մէկը, չըլինի թէ լսի:

ԱԻԱԶ.—Մի վախէք, մենք մեր քաջ խմբապետի համար գլուխներս կըտանք:

ԿՐՕՆ.—Իսկ ես ձեր գլխին ոսկու անձրև կըտեղացնեմ: (Յոյց տալով մ'ի փող): Երբ մի քանի անգամ կըփչեմ այս փողը, այդ նշան է, որ յարձակուէք:

ԱԻԱԶ.—Նրա ձայնը մեզ ամենքիս լաւ ծանօթ է: (Լսեց զանգի ձայնը): Դէ: Ժամը հասաւ, դարան մտէք, արթուն կացէք: Գուցէ մեզ տեսնող կայ, ձեռքս համբուրիր:

ԱԻԱԶ.—Կեցցէ մեր խմբապետը (Ջերմեռանդութեամբ համըռուրեց ձեռքը եւ փախաւ աջ):

ԱՐԱՄ.—(Առաջ գալով): Օրհնես տէր, օրհնես տէր, նա սիվ էր, նա սիվ էր:

ԿՐՕՆ.—(Առանց նրան նայելու ծանր ու ըարակ): Ա, այդ դու ես, խենթուլիկ... որսորդ էր, որդի:

ԱՐԱՄ.—(Երան նմանեցնելով): Սուտ չես ասում, այդ երևում էր նրա շորերից էլ: Փախչեմ, չըլինի թէ նրա նետը ինձ կպչի (Դիտմամբ թռչկոտելով փախչում է ծառի կոճղի տեւը. այդ տրոփիւնի վրայ վրանից դուրս է գալիս աչք ու ունքը տրորելով զօրականը): Փառք Աստուծոյ, զարթեցրի նրան քնից:

Տ Ե Ա Ի Լ 2.

ԿՐՕՆԱԻՈՐ, ԱՐԱՄԻԿ ԵՒ ԶՕՐԱԿԱՆ:

ԶՕՐ.—Էյ, կանգնիր:

ԿՐՕՆ.—Պատրաստ եմ, որդեակ:

ԶՕՐ.—Ձեռքերդ վեր:

ԿՐՕՆ.—(Հանդարտ փողը նստեում՝ զցելով, ըարծրացնում է ձեռքերը վեր): Կատարում եմ հրամանդ, որդի:

ԱՐԱՄ.—(Կողմ) Տեսէք ինչպէս կատու է ձեանում:

ԶՕՐ.—Թշնամի ես, բարեկամ:

ԿՐՕՆ.—Բարեացակամ եւ աղօթարար մեր ամենողորմած թագաւորի թանգագին կեանքի համար:

ԱՐԱՄ.—Ախ լիտի, սուտասան:

ԶՕՐ.—Մօտեցիր տեսնեմ:

ԿՐՕՆ.—(Մօտեցաւ): Ողջոյն քեզ, որդի:

ԶՕՐ.—Ո՞վ ես, ասա ինձ:

ԿՐՕՆ.—Մի խեղճ վանական:

ԶՕՐ.—Աստուած օգնական:

ԿՐՕՆ.—Աստուած պահապան:

ԶՕՐ.—Դէպ սէր այդպէս, սուրբ հայր:

ԿՐՕՆ.—Դէպի մենաստան... (Վերելու նայելով սարսուռ):

ԶՕՐ.—Ի՞նչ... այն սիվ է գալիս: (Մինչ նըրանք նայում են վերելու աջ կողմ, Արամիկ գողանում է փողը):

ԿՐՕՆ.—Երևի ձգնաւոր...

ԶՕՐ.—Ներիր ինձ, սուրբ հայր: Ես նոր եմ նշանակուած... երևի դու վանահայրն ես:

ԿՐՕՆ.—Դու չես սխալուած:

ԶՕՐ.—Այսօր այնտեղ կըգան թագաւորը եւ իրա աղջիկը:

ԿՐՕՆ.—Իսկ թիկնապահների թիւը մեծ է լինելու:

ԶՕՐ.—Ոչ, սուրբ հայր:

ԿՐՕՆ.—Այս կողմերում ոչ մի երկիւղ չըկայ:

ԶՕՐ.—Եւ փառք Աստուծոյ:

ԿՐՕՆ.—Յաւիտեանս ամէն: (Ուզում է գնայ):

ԶՕՐ.—(Համըռուում է նրա ձեռքը): Յիշիր մեղաւորիս քո աղօթքների մէջ:

ԱՐԱՄ.—Ինչ միամիտ ոչխարն է մեր զօրականը:

ԿՐՕՆ.—Մնաս բարով...

ԶՕՐ.—Երթաս բարով: (Մտնում է վրան):

ԿՐՕՆ.—(Կողմ)... Բաներս լաւ են գնում:

(Գնաց կամուրջով դէպ ձախ: Մի վաճառական՝ մէջքին ընդ պատահում է նրան. կրօնատորը խաշակնքում է եւ զնում ձախ):

ԱՐԱՄ.—(Մենակ): Ես Գարբեջուկը չեմ, եթէ իսկոյն ձեր գլխին խոով չանեմ ձեր չար միտքը: (Ծածկուեց ձախ կողմում):

Տ Ե Ա Ի Լ 3.

ԶՕՐԱԿԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆ

ԶՕՐ.—(Ելաւ վրանից): Է՛յ, սիվ ես:

ՎԱՃ.—(Իջնելով կամուրջից): Թագաւորի բարեկամ:

ԶՕՐ.—Ի՞նչ գործի տէր ես, ծերուկ:

ՎԱՃ.—Ոչ բարով շրջիկ վաճառական եմ:  
Շրջում եմ աշխարհից աշխարհ:

ԶՕՐ.—Բանդ գնտրելու:

ՎԱՃ.—Ոչ. իմ վիշտը մեծ է... չեմ կարող  
պատմել:

ԶՕՐ.—Վաճառականները սուտ ասող են լի-  
նում: Քո վիշտը աւելի մեծ չի լինի, քան մեր  
թագաւորինը:

ՎԱՃ.—Էհ. սի կայ աւելի բաղդաւոր, քան  
թագաւորները:

ԶՕՐ.—Մի ասիլ այդպէս:

ՎԱՃ.—Ուրեմն երևի մի անբաղդութիւն է  
պատահել նրան:

ԶՕՐ.—Այո, ծերունի:

ՎԱՃ.—(Բեռը դրեց զետնին): Պատմիր լը-  
սենք:

ԶՕՐ.—Շատ տարի առաջ հէնց այստեղե-  
րում աւագակները գողացան նրա միակ որդուն:  
Թագուհին չը կարողանալով ծանր վիշտը տանել,  
հրաժարեց աշխարհից և վանք մտաւ. բայց շատ  
չանցած մեռաւ խեղճը: Այն օրից թագաւորը և  
իրա աղջիկը շարունակ սուգի մէջ են, և մենք  
այլևս նրանց երեսին ժպիտ չենք տեսել:

ՎԱՃ.—Ասում են՝ բարի մարդ է թագաւորը,  
առաքինի:

ԶՕՐ.—Ախ, ազնիւ, ողորմած և մարդասէր:

ՎԱՃ.—Իսկ աղջիկը

ԶՕՐ.—Ինքը մի հրեշտակ: Էհ. պատմիր քո  
մասին:

ՎԱՃ.—Եղել եմ Աթէնք, Նինուէ, Բաբելոն,  
Կարթագէն, Հոռոմ: Եւ ունեմ մետաքս, թաւիշ  
ու կերպաս, աիւնք պատւական. թէ նրանք  
տեսնեն խիստ կուրախանան:

ԶՕՐ.—Գնա արքունիք, տանք քո ապրանքը.  
քեզ լաւ զին կրտան, մեծ վաստակ կանես:

ՎԱՃ.—Ասուած թուրդ հատու սնի, ազ-  
նիւ գօրական: Էհ, մնաս բարով (Գնաց աջ):

ԶՕՐ.—Երթաս բարով: (Եկաւ Արամիկ ձախ  
կողմից, փողը ուսից կախած):

Տ Ե Ս Ի Լ 4.

ԶՕՐԱՊԵՏ ԵՒ ԱՐԱՄԻԿ:

ԱՐԱՄ.—Քեռի, քեռի... Ասուած բարի լոյս...

ԶՕՐ.—Ա. այդ դձեւ ես, խենթ Գարրեջուկ...  
Ասա «քարի երեկոյ», վասնզի հիմա առաւօտ չի,  
այլ երեկոյ: Լսեցիր, երեկոյի գանգը նոր տւին.

ԱՐԱՄ.—Սխալ ես. առաւօտ է, դու ինքդ  
նոր գարթնեցիր:

ԶՕՐ.—Չը համարձակես ինձ ծաղրել, թէ  
չէ լեզուդ կը կտրեմ: Երեկոյ է, և վանահայրն  
էլ գնաց աղօթքի:

ԱՐԱՄ.—Նոով կենայ նրա գլխին ժամ պա-  
տարագ, Տէր ողորմեա:

ԶՕՐ.—Ախ, դու յիմարագլուխ, ոչ ասածդ ես  
հասկանում, ոչ խօսածդ:

ԱՐԱՄ.—Իսկ դու լսածդ: Ես քեզ բան էի  
խնդրել, ասացիր թագաւորին:

ԶՕՐ.—Ոչ, ոչ, թագաւորին դեռ չեմ տեսել:

ԱՐԱՄ.—(Տնազելոյ նրան) «Ոչ ոչ, թագա-  
ւորին դեռ չեմ տեսել»: Վահ, ինչ սուտասան-  
ներն են լինում այդ գլխներին ձիու պոչ կապած-  
ները... (ՓողՄը):

ԶՕՐ.—Դէ հեռացիր այստեղից... թագաւորն  
է գալիս... կորիր:

ԱՐԱՄ.—Իսկի էլ չեմ հեռանալու: Ես պէտք  
է խօսեմ նրա հետ:

ԶՕՐ.—(Ժիծաղով): Ի՞նչ պէտք է խօսես, խե-  
լառ:

ԱՐԱՄ.—Այն ես գիտեմ, ինչ կը խօսեմ.  
պրծաւ գնաց: (Լսեցին բոժոժների ձայներ):

ԶՕՐ.—Դէ շուտ հեռացիր, կորիր այստեղից:

ԱՐԱՄ.—Նա սի է, որ ձիուց իջնելիս երա-  
սանակը բռնեցին:

ԶՕՐ.—Ինքը թագաւորն է, հեռացիր:

ԱՐԱՄ.—Իսկ այն աղջիկը: Չեոքսի է շի-  
նած, թէ հէնց իսկական հրեշտակ է:

ԶՕՐ.—Այ տղայ դու դեռ այստեղ ես, թէ  
կամենում ես, որ քո պատճառով ինձ էլ կորց-  
նեն: (Ուղղեց իրան): Կորիր, ասում եմ է:

ԱՐԱՄ.—Մի վախիլ, քեռի... (Բարձրացաւ  
ձառի ընի վրայ: Թագաւորը շրախմբով Մանէի

հետ եկաւ աջ կողմից: Զօրականը թուրը մերկացրեց եւ ըննեց առաջին, աշխատելով նստեալում ծածկել Արամիկին: Թագաւորը նստեց):

**Տ ե ս ի լ 5.**

**ԶՕՐԱԿԱՆ, ԱՐԱՄԻԿ, ԹԱԳԱՒՈՐ, ՄԱՆԷ ԵՒ ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐ:**

ԱՐԱՄ.—(Բարձրացրեց մատը): Թագաւորն ապրած կենայ:

ԶՕՐ.—(Նոյն դիրքով): Այ տղայ, ի՞նչ ես ձայնդ բարձրացնում... կտրի ձայնդ... անխելք:

ՄԱՆԷ.—Հայրիկ, տես տես... ո՞վ է այն գիւղացի տղան:

ԹԱԳ.—Ո՞վ է այդ տղան:

ԶՕՐ.—Ձերդ մեծութիւն, սա մի խենթութիւ կ անտէր երեխայ է, քանի որ է թափառում է այս կողմերում:

ԹԱԳ.—Մի արգելէք նրան: (Զօրականը քաշեց Արամիկի առաջից): Ի՞նչ ես կամենում, տղայ: Խօսիր տեսնեմ:

ԱՐԱՄ.—Բարե աջողում, Աստու բարին, գալդ բարի, ի՞նչ բարիդ հարցնենք:

ԶՕՐ.—(Նորից հին տեղում կանգնելով). Այ տղայ, մի խայտառակել մեզ:

ՄԱՆԷ.—Հայրիկ, ինչո՞ւ են արգելում նրան:

ԹԱԳ.—Ոչինչ, ոչինչ, զօրապետ: (Զօրականը հեռացաւ): Վայր իջիւր, փոքրիկ: (Արամիկը իջաւ): Առաջ եկ: (Արամիկը եկաւ եւ գլուխ տեց): այդպէս, այդպէս, մի շփոթւիլ:

ԱՐԱՄ.—Բարե տեսանք, քոյրիկ: Տաքից թըշերդ կարմրել են: Ես շատ լաւ եմ, դու լաւ ես:

ՄԱՆԷ.—(Ժպտալով): Շնորհակալ եմ, ազնիւ պատանի: Անունդ ի՞նչ է:

ԱՐԱՄ.—Իմ անունս Գարրեջուկ է, քո անունդ ի՞նչ է:

ՄԱՆԷ.—(Ժիծաղով). Մանէ:

ԱՐԱՄ.—(Յանկարծ ինչ որ յիշելով). Մանէ...

ՄԱՆԷ.—Այո, Մանէ: Հայրիկ, ես վախենում եմ: Ի՞նչ պատահեց Գարրեջուկին:

ԹԱԳ.—Գարրեջուկ, ի՞նչ պատահեց քեզ:

ԱՐԱՄ.—Ոչինչ... ըմ... ոչինչ:

ՄԱՆԷ.—Երևի դու մի բան յիշեցիր:

ԱՐԱՄ.—Այո... ես յիշեցի մի երազ... մի հրաշալի երազ...

ԹԱԳ.—Պատմիր լսենք:

ԱՐԱՄ.—Մի անգամ երազում մի թագաւորին ձ նստեցրել էր իր ծնկան:

ԹԱԳ.—Թագաւոր:

ԱՐԱՄ.—Այո, քեզ խիստ նման, բայց նա երիտասարդ էր...

ԹԱԳ.—Այո, սիրելիս, ամեն մի բոլորն մեզ ձերութիւն է բերում: Յետոյ:

ԱՐԱՄ.—Յետոյ նրա մօտ կանգնած էր մի կին, մի շատ գեղեցիկ երեխայ ձեռքին:

ՄԱՆԷ.—Նա երևի տեսել է մեր պատկերը...

ԱՐԱՄ.—Յետոյ շատ մեծամեծներ, խնճոյք, զօրախաղ, երաժշտութիւն, որսկան շներ, որսորդներ, և այլ շատ բաներ: Ասուած վկայ, ճշմարիտ եմ ասում... օ, քաղցր երանգ...

ԹԱԳ.—Ինչե՞ր է խօսում այդ տղան:

ԶՕՐ.—Նա մի խենթ է, տէր թագաւոր, նըրան այդպիսի բաներ շատ է պատահում:

ԱՐԱՄ.—Դու նրան մի հաւատալ: (Յոյց տեց ծակատը) Նա ինքը այնպէս... ամեն թուկից փախածի հաւատացող և շատ էլ ձերմակ սուտեր փչողներից է...

ԹԱԳ.— Սա: (Զօրականը ըստկացած շըրթունքները կոծոտում է):

ԱՐԱՄ.—Քանիցս խնդրել եմ, որ ուզում եմ քո մօտ ծառայութեան մտնեմ, բայց նա միշտ ինձ խաբում է, (նմանեցնելով նրան) «ոչ ոչ, դեռ թագաւորին չեմ տեսել»: Ը՛հ, ի՞նչ ես պետքներդ կոծոտում. չի ամաչում, դեռ ծիծաղում է: Ի՞նչ է, կարծում ես քեզից վնաս կը ծառայեմ նրան: Թո՞ղ մէկ ընդունի, տես ինչեր կասեմ նրան:

ՄԱՆԷ.—Հայրիկ, թո՞ղ Գարրեջուկը մեզ մօտ լինի միշտ:

ԹԱԳ.—Թո՞ղ քո կամքդ լինի, գաւազ: Տարէք այս պատանու զգեստը փոխէք:

ԱՐԱՄ.—Իսկ դուք գէպ ո՞ւր պիտի շնորհ տանէք:

ԹԱԳ.—Դէպի վանք:

**ԱՐԱՄ.**—Մի գնաք, օ, մի գնաք: Ես ձեզ արգելում եմ, ես ձեզ չեմ թողնի:

**ՄԱՆԷ.**—Մենք շուտով կը վերադառնանք:

**ԱՐԱՄ.**—Ոչ, ոչ. լսեցէք ինձ, աղաչում եմ... մի գնաք... այստեղ գաղտնիք կայ:

**ՄԱՆԷ.**—Հայրիկ, նայիր նրա աչքերին, նա լաց է լինում... տես ինչպէս է խնդրում... լսենք նրա աղաչանքը:

**ԹԱԳ.**—Երբեմն զարմանալի նախազգացումն են ունենում երեխաները: Ասա, ի՞նչ գիտես:

**ԱՐԱՄ.**—Դուք շրջապատած էք աւազակներով:

**ԹԱԳ.**—Ինչպէս, այստե՞ղ...

**ԱՐԱՄ.**—Այո, նրանք դարան են մտել, ձեր շուրջը պատել...

**ԹԱԳ.**—Էյ, զօրական, ի՞նչ եմ լսում ես... մինչև երբ այսպէս:

**ԶՕՐ.**—Նա գառանցում է, տէր թագաւոր:

**ԱՐԱՄ.**—Լուիւր միամիտ քեռի: Այն վանականը, որ քեզ հետ խօսեց, աւազակապետ է: Նա կամենում է գողանալ Մանէին. ահա նրա փողը, եթէ նա փչէր, իսկոյն պէտք է ամեն կողմից յարձակւէին ձեր վրայ:

**ԹԱԳ.**—Բայց որտեղից ընկաւ այդ փողը քո ձեռքը:

**ԱՐԱՄ.**—Ես գողացայ:

**ԹԱԳ.**—Տեսնեմ (առաւ փողը նայեց): Սա իմ Բանդօ իշխանիս փողն է, ես եմ նւիրել նրան: Անշուշտ այստեղ մի մեծ գաղտնիք է թագնւած: Էյ, զօրականներ, նրա բերանով խօսում է ինքը ճշմարտութիւնը: Իսկոյն աւելացրէք զինւորների թիւը, յետոյ փչեցէք և երբ յարձակւեն, բռնուտեցէք բոլորին: Վազէք, բերէք վանականին արքունիք: (Զօրականը երկու մարդով վազեցին կամուրջով ձախ):

**ՄԱՆԷ.**—Գարրեջուկ... ինձանից մի հեռանալ:

**ԹԱԳ.**—Դէպի արքունիք: (Երաժշտութիւն, ամենքը գնում են աջ):

### Բ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Տեսարանը ներկայացնում է լայն ծառուղի:

Մէջտեղ թագաւորի պալատի սիւնազարդ տերրասը: Լսում է երաժշտութիւն, յետոյ վաճառականի հառաչի ձայնը. թագաւորին շանով երաժշտութիւնը լսում է:

### Տ Ե Ս Ի Լ 1.

**ԹԱԳԱՒՈՐ, ՄԱՆԷ, ՇՔԱԽՈՒՄԲ, ՅԵՏՈՅ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԱԶ ԿՈՂՄԻՑ:**

**ՎԱՃ.**—(Գզգաւած, թախանաւած ընկնում է թագաւորի ոտները): Տէր թագաւոր, խնայեցէք ծերութեանս, օգնեցէք թշուախս: Հէնց այստեղ, ձեր մեծութեան ամարանոցի մօտ, իսկոյն կողոպտեցին ինձ աւազակները և տարին իմ բոլոր հարստութիւնը:

**ԹԱԳ.**—Վեր կաց ոտքի, խեղճ ծերունի: Դու կորցրածիդ արժէքը կըստանաս, վասնզի եկել ես այն բոպէին, երբ Մանէիս կեանքը վտանգից է ազատուել:

**ՎԱՃ.**—Շնորհակալ եմ, բարի թագաւոր...

**ԹԱԳ.**—Դու այստեղի վաճառական ես:

**ՎԱՃ.**—Ոչ, ձերդ մեծութիւն: Ես այս կողմերում եկել եմ փնտրելու իմ որդուն:

**ԹԱԳ.**—Քո որդուն:

**ՎԱՃ.**—Այո, գեղանի, սիրուն իմ միակ որդուն, որ թողել է հայրական հարուստ տունը և փախել:

**ԹԱԳ.**—Աղօթիւր ինձ պէս: Ես էլ եմ քեզ պէս, կորցրել որդուս: Ահ, իմ թագաւորութեան կէսը կըտայի, թէ որ գտնէի իմ Արամիկին: Շատ փնտրեցի. աշխարհի ամեն կողմ սուրհանդակներ ուղարկեցի, ոչ մի տեղ չըգտան: Դու կորցրել ես միայն որդուդ, իսկ ես թագուհուս էլ հետը:

**ՎԱՃ.**—Երբ իմ թագաւորի վիշաւ մեծ է քան իմը, ապա ես կըլուեմ: Ես այլ ևս այդ մասին չեմ համարձակւի բերանս բացել:

**ԹԱԳ.**—Այո, վճռեցի միշտ աղօթել, որ մոռանամ, բայց... չի... մոռացւում:

**ՎԱՃ.**—Կարծում էի ծերութեանս յենարանը կըլինի:

ՄԱՆԷ.—Հապա ինչո՞ւ փախաւ: Գու նրան ծեծում էիր:

ՎԱՃ.—Ախ, ոչ. նազելի արքայադուստր: Նա չըկարողացաւ տանել իմ քնքշութիւնները:

ՄԱՆԷ.—Ինչպէ՞ս. քնքշութիւնները:

ՎԱՃ.—Այո: Ես նրան պահում էի աչքիս լոյսի պէս, իսկ նա սիրում էր նժոյգ ու արկած, նետ, աղեղ, կապարճ:

ԹԱԳ.—Հմ. ճիշտ իմ որդու նման: Նա էլ էր աշխոյժ, ճարպիկ, չարաճճի:

ՄԱՆԷ.—Ծերուկ, քո որդուդ անունը ի՞նչ էր:

ՎԱՃ.—(Ժպտալով): Հմ... շատ սիրելուցս, կատակով Գարրեջուկ կրկոչէի:

ՄԱՆԷ.—Գարրեջուկ...: Այստեղ կայ մի Գարրեջուկ:

ՎԱՃ.—Ո՞ւր է նա, ո՞ւր է, Աստծոյ սիրուն. գուցէ հէնց նա իմ որդին է:

ՄԱՆԷ.—Նրան տարին նոր զգեստ հագցնելու... Հայրիկ, ինչքան սա պիտի ուրախանայ, եթէ որ նա սրա որդին է: Նա մի փոքր խենթուիկ է, այո:

ՎԱՃ.—Օ, ոչ. խելքի ծով է նա. միայն կատակասէր է և ուզած ըստէին ձեռնում է թէ խենթ, թէ ապուշ: (Աջից մտնում է Արամիկ արքայավայել չափնաձեռն և վաճառականի կապոցը մէկի շալակը տաձ):

Տ ե ս ի 1 2.

ԹԱԳԱՒՈՐ, ՄԱՆԷ, ՎԱՃԱՌԱԿԱՆ, ԱՐԱՄԻԿ ԵՒ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՆԵՐ:

ԱՐԱՄ.—Տէր թագաւոր, փողը փչեցի և բոլոր աւագակները ոչխարի նման թափւեցին մեր գայլերի ձեռքը: Այս կապոցն էլ տեսնես ո՞ր վաճառականիցն են գողացել: Ի՞նչու ես ժպտում, Մանէ... շորերս վաճառ են նստում վրաս: (Պըտըտում է տեղում):

ԹԱԳ.—Վաճառական, չըլինի՞ քոնն է այդ ապրանքը: (Վաճառականը չորեց նայելով): Բայց դու, չարաճճի Գարրեջուկ, նախ այս կողմ նայիր: Ասա, ճանաչում ես այդ ծերուկին:

ԱՐԱՄ.—(Նայեց եւ ապշեց): Հայրիկ...

ՎԱՃ.—(Թուաւ ոտքի, գրկեց)... Գարրեջուկ, իմ թանգագին զաւակ...

ԱՐԱՄ.—(Ժածուկ)... Հայրիկ... ներիւր ինձ, որ փախել եմ...

ՄԱՆԷ.—Հայրիկ, դու դարձեալ լաց ես լինում: (Փաթաթում են հօր հետ):

ԹԱԳ.—Ախ իմ քաղցրիկ Մանէ, լինելու է արդեօք մի այսպիսի բախտաւոր օր էլ ինձ համար, որ գտնեմ եղբորդ... որ ես էլ կարօտով գրկեմ և մէկ մխիթարեմ:

ՄԱՆԷ.—Գուցէ Աստուած լսի մեր աղօթքը...

ԱՐԱՄ.—(Ժածուկ): Բայց սա ի՞նչ է քո դրութիւնը:

ՎԱՃ.—Այդ մասին դու յետոյ կիմանաս: Պատմիր, այդ ի՞նչ շորեր է, ինչպէ՞ս արժանանացար այդ փառքին:

ԱՐԱՄ.—Սուս, դու էլ այդ մասին յետոյ կիմանաս:

ԹԱԳ.—Էհ, ինչո՞ւ չուրախանայ թագաւորը, երբ նրա հպատակներից մէկը այսպէս երջանիկ է: Հնչեցէք փողերը, կանչեցէք, թող պարեն գուսաններ, պարողներ:

(Միջանկեալ: Երաժշտութիւն, պար: Յետոյ Զօրականը կապտած քերում է կրօնատրին: Երաժշտութիւնը լուում է):

Տ ե ս ի 1 3.

ԹԱԳԱՒՈՐ, ՄԱՆԷ, ԱՐԱՄԻԿ, ՎԱՃԱՌԱԿԱՆ, ԿՐՕՆԱՒՈՐ, ԶՕՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼԻՔ:

ԶՕՐ.—Տէր թագաւոր. այդ պատանին ճըմարիտ էր ասում: (Յոյց տւեց մի սուր): Ես այս թուրը հանեցի այս հայր սուրբի զղանցքի տակից:

ԱՐԱՄ.—Ա՛, տեսար. իսկ դու ինձ խենթուիկ էիր կոչում:

ԹԱԳ.—Ինչպէ՞ս, այդ ճշմարիտ է... խօսիր, ո՞վ մարդ:

ԿՐՕՆ.—(Զորեց): Տէր արքայ, ներիւր մոլորւածիս...: Ես ամեն ինչ կատարում էի չար ոգիների հրամանով:

ԱՐԱՄ.—Կամենում ես փչել քո փողը. առ փչի՛ր՝ տի՛ւ տի՛ւ: Սրա շորերը շատ լայն է, թագաւոր, և դեռ Աստուած գիտէ ինչեր կան մէջը թաքցրած: Այնպէս չէ՛, տէր մամա:

ԹԱԳ.—Խոստովանիր թշւառական, միայն  
այդ յանցանքն ես գործել, թէ էլի՞ ուրիշները:

ԿՐՕՆ.—Օ, բարի թագաւոր... հրամայիր քաշ  
տալ ինձ: Ես տեսնում եմ ինձ թողութիւն չըկայ:

ՎԱՃ.—(Յանկարծ) Ա...:

ԹԱԳ.—Ի՞նչ պատահեց քեզ...

ՎԱՃ.—Տէր թագաւոր, ես ճանաչեցի այս  
աւազակին, Գարրեջուկին սա է ինձ ծախել:

ԹԱԳ.—Ծախել: Ինչպէս: Դու սրան գնել  
ես: Ուրեմն սա քո հարազատ որդին չէ:

ՎԱՃ.—Ախ, թէև հարազատից բիւր անգամ  
սիրելի... բայց ես նրան գնել եմ...

ԹԱԳ.—էյ, խոստովանիր, ի՞նչ է ասում այդ  
մարդը:

ԿՐՕՆ.—Զուտ ճշմարտութիւն:

ԹԱԳ.—Ուրեմն ո՞վ է այդ հրեշտականման  
տղան:

ԿՐՕՆ.—Նա քո որդին է...

ԹԱԳ.—Ա... ա... (Իրարանցումն, յուզումն,  
լաց... Մանէ, թագասոր, Արամիկ փաթաթում  
են իրար): Արամիկ, Արամիկ... օ, իմ քաղցրիկ  
որդի... ա, ա...

ԱՐԱՄ.—Ուրեմն իմ իսկական անունը Ա-  
րամիկ է:

ՄԱՆԷ.—Ոչ, ոչ... չեմ ուզում, ես քեզ միշտ  
Գարրեջուկ եմ կոչելու:

ԱՐԱՄ.—Ուրեմն դու իմ քոյրն ես, Մանէ:  
Դու իմ հայրը, թագաւոր:

ԹԱԳ.—Օ, իմ քաղցրիկ որդի... ինչպէս չը-  
կարողացայ քեզ ճանաչել: Աւազակ, լսիր դա-  
տալճիոգ: Ես այնքան երջանիկ եմ, այնքան  
յուզւած, որ չեմ կամենում քեզ պատժել... կա-  
րող ես ոտքի կանգնել, գնալ, հեռանալ, դու ա-  
զատ ես:

ԱՐԱՄ.—Ապա ո՞ւր է իմ մայրը:

ԹԱԳ.—(Չնորը աչքերին տանելով): Աւազ, նա  
չըկայ, որ տեսնի այս ուրախութիւնը: Աւա-  
զակ, դու դեռ ասելիք ունես:

ԿՐՕՆ.—Տէր արքայ, մի նայիր ինձ այդպի-  
սի աչքերով, որոնց մէջ արտասուք եմ նշմա-  
րում... թոյլ տուր սրբեմ այդ արցունքներդ:

ԹԱԳ.—Օ... երբէք չես կարող:

ԿՐՕՆ.—Կարող եմ: Ա՛ն այս բանալին: Այն-  
տեղ, վանքի ներքնատան... թագուհին մեռած չէ:

ԹԱԳ.—Ի՞նչ է ասում այս մարդը: Երանգ է  
թէ հրաշք:

ԿՐՕՆ.—Զուտ իրականութիւն:

ԹԱԳ.—Վազէք... բերէք իմ թագուհուն  
(Երկու հոգի առնում են ըանալին եւ վազում  
ծախ կողմ): Պատմիր, ով մարդ. ինչո՞ւ արիւր ինձ  
այդքան վատութիւն:

ԿՐՕՆ.—Թագաւոր, դու նւիրեցիր ինձ իմ  
կեանքը, երևի այդ իմ բազմաթիւ ծառայու-  
թեանցս փոխարէն քեզ և հայրենիքին:

ԹԱԳ.—Ո՞վ ես դու:

ԿՐՕՆ.—Ես քո գորապետն եմ, Բանդօ իշխանը:

ԹԱԳ.—Իմ քաջ Բանդօ իշխանը... Բայց չէ՞  
որ որսում քեզ պատառոտել են դազանները:

ԿՐՕՆ.—Ոչ: Լեռնականների դէմ պատե-  
բազմից յետոյ, երբ յաղթանակով եկայ մայրա-  
քաղաք, փառքից կուրացած չար միտք յղացայ,  
քո թագը խլեմ, թագաւոր դառնամ: Թագուհին  
չըհամաձայնեց ինձ հետ գլուխ բերել դաւադրու-  
թիւնը: Իսկ ես վախենալով քո պատժից, փա-  
խայ և յուր տարածել տւի, որ որսում ինձ  
կերել են դազանները: Յետոյ խուժք կազմեցի,  
որդուդ գողացայ, որ նրանով գրաւեմ թագու-  
հուն, բայց նա դարձեալ չըկամեցաւ և ես ծա-  
խեցի որդուդ Տիգրիսի ափին, այս վաճառականին:

ԹԱԳ.—Իմ անգին թագուհի:

ԿՐՕՆ.—Յետոյ ես ծպտեալ վանք մտայ,  
կրօնաւոր դարձայ: Թագուհին եկաւ աղօթելու,  
ես նրան դեզ տւի և նա քուն մտաւ: Բայց  
դամբարանի մէջ, ուր որպէս թէ ամփոփեցիք նը-  
րան իբր մեռեալ, ես ուշքի բերի նրան և մինչ  
այսօր պահում եմ նրան փակւած:

ԹԱԳ.—Ինչո՞ւ համար, ով անգութ մարդ.  
միթէ՞ քեզ համար քիչ էր այն փառքը, որ պե-  
տութեանս մէջ ամենից սիրելին էիր... ինչո՞ւ  
համար...

ԿՐՕՆ.—Որովհետեւ նա մերժեց հետս միա-  
նալ և քեզ սպանել: Ահա և թագուհին: (Մինչ  
ամենքը նայում են ծախ՝ ինչպէս ուղեւորների հետ  
զալիս է թագուհին, նա ոտքի է կանգնում եւ  
փախչում աջ):

ԹԱԳ.—Օ՛, ես այս չափազանց երջանկու-  
թիւնից կրմեռնեմ իսկոյն: Մայր, մայր, զրկիւր  
զաւակներիդ... զրկիւր և ինձ իմ բազմաշարար  
առաքինի թագուհիս: (Գրկախառնութիւններ, զար-  
մացք եւ հիացական կոչեր. ումանք սրբում են  
աչքերը):

ՄԱՆԷ.—Կեցցէ իմ եղբայր Գարրեջուկը...

ԹԱԳ.—Այո, այո. այդ բոլորը նրա շնորհիւ  
կատարեց...

ԱՐԱՄ.—Ոչ: Աստուած ամենատես չրկամե-  
ցաւ ծածկւած մնայ մարդկանց չարութիւնը, Նա  
չրկամեցաւ վիրաւորւած մեան անմեղ սրտերը:  
Սա նրա հրաշքն էր: Մայր, հայր, ժողովուրդ,  
փառաբանենք նրա անունը: (Ամենքը շոքեցին):

Ա. դ օ թ ֆ

Սքանչելի հրաշքով մեզ զարմացրիւ,  
Մեր հառաչանք, մեր աղերսանք անտես չարիւր.  
Սրբեցիւր դու արտասուքը մեր աչերից  
եւ հեռացրիւ ծանր վիշտը մեր սրտերից:

(Ոտքի կանգնեցին):

ԹԱԳ.—Ազատութիւն է պարգևում թագա-  
ւորը իր երկրի բոլոր բանտարկեալներին, բա-  
ցեցէք բոլոր բանտերի դռները: Բացեցէք բոլոր  
շտեմարանները և առատ հաց բաժանեցէք բոլոր  
չքաւորներին: Կեցցէ իմ թագաժառանգը, կեցցէ  
թագուհիս: (Երջանկով թիւն, ուռայ, կեցցէներ):

ԱՄՆՆՔԸ.—Կեցցէ և թագաւորը:

(Երաժշտութիւն):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր



1883 Երեսնամեակ Աղբիւրի 1912

Բացած է 1912 թ. բաժանորդագրութիւնը

XXX  
ՏԱՐԻ

ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ

XXIII  
ՏԱՐԻ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ Դ Զ Ա Ն Դ Է Ս Ն Ե Ր Ի

Հրատարակուած են ձոխ, բազմաբովանդակ, մասնակցութեամբ մեր և եւրոպական յայտնի գրականագէտների, մանկավարժների և արւեստագէտների:  
**ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ.**

- I. ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը «ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ» յաւելածով:
- II. ՏԱՐԱԶ պատկերազարդ հանդէսը «ԹԱՏՐՈՆ և ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ» յաւելածով:
- III. ԱՌՈՂՋԱՊԱՀ ամսաթերթը:
- IV. ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆԻՔ V և VI պրակներ:
- V. ՕՐԱՑՈՅՑ-ԱԼՄԱՆԱԽ 1913 թ.
- VI. ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ:
- VII. ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԳԻՒՂՈՒՄ, բազմադոյն հրաշագեղ պատկեր, պատրաստուած Եւրոպայում:
- VIII. Հայոց ապագայ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ մեծագիր պատկերը:
- IX. MONA LISA (Ջիոկոնդա) Լուվրի մուզէից զողացւած տիեզերահռչակ հիասքանչ նկարի իսկական պատճէնը, հոյակապ զարդ ամենափարթամ դանդիմ:
- X. Մեծն Նապոլէօն I և հայոց Լևոն վերջին թագաւոր:
- XI. Նապոլէօն Բօնապարտի մանկութիւնը պատկերներով:
- XII. ԵՐԵՄՆԱՄԵԱՅ ԱՂԲԻՒՐԸ, souvenir.

Այս բոլորի տարեկան բաժանորդագիրը  
**10 ռ., արտասահմ. 18 ռ. կամ 50 ֆր.**

**Դպրոցական աշակերտների համար**

Աղբիւր տարեկան 2 ռ. Առանց յաւելածների 1 ռ.  
 ԱՂԲԻՒՐ և ԱՌՈՂՋԱՊԱՀ տարեկան 3 ռ.  
 ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ և ՏԱՐԱԶ առանց յաւելածների, պրէմիաների և թատրոն երաժշտութեան՝ տարեկան 4 ռ.  
 Աղբիւր, Առողջապահ, Տարագ, բոլոր յաւելածներով եւ պրէմիաներով 5 ռ. (արտասահման 10 ռ.)  
 Ապառիկ և մաս-մաս բաժանորդագրութիւն չի ընդունուում:  
 Հասցէն՝ Тифлис, Редакция „АГБИУР“ կամ „ТАРАЗ“.  
 Tiflis, (Caucase) Direction Agbür կամ Taraz.  
 Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶՍՐԵԱՆ.

6165